ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Արմենֆարմ» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Թանայանի, Ա. Մկրտչյանի,
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցում, քիմիական նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 10.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Վանաձորի բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

- Դադարեցնել հանձնաժողովի՝ 24.12.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- Դադարեցնել հանձնաժողովի 26.12.2019թ. թիվ 4 որոշմամբ Ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- Դադարեցնել 2019թ. դեկտեմբերի 26-ին կայացված և www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 36, 37 և 41-րդ չափաբաժինների:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 10.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/05 համարի ծածկագիրը, իսկ 14.01.2020թ.-ին և 20.01.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/05 համարի ծածկագրով բողոքի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/17 համարի ծածկագիրը և 17.02.2020թ.-ին և 28.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 28.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.03.2020թ.-ին:

2. «Արմենֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արմենֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վանաձորի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածին պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով տեխնիկական բնութագրով /այսուհետ նաև Տեխնիկական բնութագիր/ 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար սահմանվել է հետևյալը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը և ապրանքային նշանը**	**տեխնիկական բնութագիրը**
36	33621643	Անիոզիմ սիներժի Ֆերմենտատիվ լվացող նյութ՝ նախատեսված բժշկական իրերի լվացման համար	Չորս և ավելի ֆերմենտ պարունակող բազմակոմպոնենտ խտանյութ: Խտանյութից ստացված աշխատանքային լուծույթները չեն առաջացնում մետաղների ժանգոտում, չեն վնասում ջերմազգայուն նյութերը, լավ լվացվում են: Կիրառվում է տարբեր նյութերից բժշկական արտադրատեսակների, ներառյալ վիրաբուժական (այդ թվում խողովակ ունեցող), միկրովիրաբուժական և ատամնաբուժական (այդ թվում պտտվող) գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար, կոշտ և ճկուն էնդոսկոպների ձեռքային եղանակով նախնական և նախամանրէազերծումային մաքրման համար (եզրափակիչ՝ բարձր մակարդակի ախտահանումից առաջ, էնդոսկոպներին կից գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար: Լվացող միջոցը պետք է երաշխավորված լինի կամ Storz, կամ Olympus, կամ Fujinon, կամ Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Լվացող միջոցի գործարանային փաթեթավորումը 5լ տարայով: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

37	33621643	Անիոսգել Հականեխիչ գել ձեռքերի հիգիենիկ եւ վիրաբուժական մշակման համար	Անիոսգել : Բաղադրությունը - դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Հականեխիչ գելը պետք է նախատեսված լինի վիրաբույժների, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության մեթոդական հրահանգներով: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ՝ ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվի առնվազն 3 ժամվա ընթացքում: Փաթեթավորումը - 1 լ ծավալի պոլիէթիլենային տարա դիսպենսերով: Մատակարվող ապրանքի պահպանման ժամկետը ոչ պակաս քան 3 տարի: Մատակարարման պահին ապրանքի ժամկետի առնվազն 1/2-ի առկայություն Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը ոչ ավել քան 3մլ- մինչև 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը ոչ ավել քան -6մլ - մինչև 90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: 1լ նախատեսված է ոչ պակաս քան 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Ունենա որակի հավաստագիր: ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական
41	24451140	Ստերանիոս Բարձր մակարդակի ախտահանող (ԲՄԱ) և մանրէազերծող նյութ - Գլուտարալդեհիդ 20%: Խտանյութ	Ստերանիոս : Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ,կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը- 0.5 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: 0,5լիտր խտանյութից պատրաստվում է 2% 5լիտր աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը ոչ պակաս, քան 30 օր է: Խտանյութից աշխատանքային լուծույթ կարելի է պատրաստել ըստ անհրաժեշտ ծավալի: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Ունենա թեստ զոլեր լուծույթի պիտանելիությունը վերահսկելու համար: Ախտահանիչ նյութի pH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման,բարձր մակարդակի ախտահանման,մանրէազերծման և սպորազերծման համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը մինչև 10րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը մինչև 60րոպե: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների համար հայտ են ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ ընկերություն/:

«Խաչպար» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար ներկայացրել է տեխնիկական բնութագրերով սահմանված ապրանքներին անհամապատասխան (ոչ համարժեք) բնութագրերով ապրանքներ հավելվածը կցվում է), այն է՝ 36-րդ չափաբաժին - որպես ագդող նյութ միջոցը պարունակում է պրոտեազա պրոտեոլիտիկ ֆերմենտ, 37-րդ չափաբաժին- որպես հիմնական ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,1%, որպես սիներգետիկ բաղադրիչ՝ իզոպրոպանոլ (պրոպանոլ - 2)՝ 40% և 41-րդ չափաբաժին - «Ստերոքս», գլուտարալդեհիդ 2,7 % -5լ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 24.12.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ:

www.gnumner.am կայքում 2020թ. հունվարի 8-ին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ Հանձնաժողովի 26.12.2019թ. թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան, ինչով պայմանավորված ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 13-րդ հոդվածի համաձայն.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարվելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ, բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման, գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-իև մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, «Վանաձորի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածին պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով տեխնիկական բնութագրով նախատեսվել է ձեռքբերել 36-րդ չափաբանին - Անիոզիմ սիներժի Ֆերմենտատիվ լվացող նյութ՝ նախատեսված բժշկական իրերի լվացման համար, 37-րդ չափաբաժին - Անիոսգել Հականեխիչ գել ձեռքերի հիգիենիկ եւ վիրաբուժական մշակման համար, 41-րդ չափաբաժին - Ստերանիոս Բարձր մակարդակի ախտահանող (ԲՄԱ) և մանրէազերծող նյութ - Գլուտարալդեհիդ 20% Խտանյութ:

<<Խաչպար» ՍՊԸ-ն, թիվ 1,1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար ներկայացրել է իր առաջարկը:

Ստորև ներկայացնում ենք՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկազրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների՝ 36, 37 և 41-րդ չափաբաժինների, աեխնիկական բնութագրերի և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ 36, 37 և 41-րդ

չափաբաժինների, ապրանքների տեխնիկական բնութագրերի միջև առկա անհամապատասխանությունները (ներկայացված է նաև «Արմենֆարմ» ՍՊԸ-ի առաջարկը).

Հ/Հ	Անվանում	Հրավերով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագիր	«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութի տեխնիկական բնութագիր	«Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող նյութի տեխնիկական բնութագիր	Տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերին
36	Անիոզիմ սիներժի Ֆերմենտատիվ լվացող նյութ՝ նախատեսված բժշկական իրերի լվացման համար	Չորս և ավելի ֆերմենտ պարունակող բազմակոմպոնենտ խտանյութ: Խտանյութից ստացված աշխատանքային լուծույթները չեն առաջացնում մետաղների ժանգոտում, չեն վնասում ջերմազգայուն նյութերը, լավ լվացվում են:: Ունենա որակի հավաստագիր, ՀՀԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ::	«Տուրբիլոն Ե» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է բարձր խտությամբ, ջրում լուծելի, համասեռ դեղին հեղուկ յուրահատուկ հոտով և ցածր փրփուրառաջացմամբ : Որպես ազդող նյութ՝ միջոցը պարունակում է պրոտէազա պրոտեոլիտիկ ֆերմենտ, լրացուցիչ անիոնային մակերեսային ակտիվ նյութեր, ֆունկցիոնալ հավելումներ: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ առ 06 հուլիսի 2018թ., թիվ 1706-Ա:	5 ֆերմենտ՝ ամիլազա, լիպազա, սլրոտեազա. մանանազա և ցելուլազա պարունակող բազմակոմպոնենտ խտանյութ է: Խտանյութից ստացված աշխատանքային լուծույթները չեն առաջացնում մետաղների ժանգոտում, չեն վնասում ջերմազգայուն նյութերը, լավ լվացվում են: Ունի որակի հավաստագիր, ՀՀԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:	Չորս և ավելի ֆերմենտ պարունակող բազմակոմպոնենտ խտանյութի փոխարեն առաջարկվել է միայն 1 ֆերմենտ՝ պրոտեոլիտիկ պրոտեազա պարունակող նյութ:
37	Անիոսգել հականեխիչ գել ձեռքերի հիգիենիկ եւ վիրաբուժական մշակման համար	Անիոսգել: Բաղադրությունը - դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում քանակը չգերազանցի 5%-ը,	«Դիասեպտիկ 40 գել», 1լ, իրենից ներկայացնում է բազմաբաղադրիչ սպիրտ պարունակող ախտահանիչ միջոց մաշկային հականեխիչ մածուցիկ անգույն թափանցիկ կիրառման համար պատրաստ հեղուկի տեսքով:	Դենատուրացված էթանոլ 60%-75%, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ	դենատուրացված էթանոլ 60%-75%-ի փոխարեն առաջարկվե է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 0,1%, որպես սիներգետիկ բաղադրիչ՝

		ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, աիքսոարոպիկ զել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիս ության ամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային զրգռող, մաշկա-ռեզորբտիվ ն գերզղայուևացնող ազղեցություններ: Չպեաք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: ձականեխիչ զելը պետք է նախատեսված լինի վիրաբույժների, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար հաստատված ՀՀ Առալջապ ահոլթյա և նախարարության մեթոդական հրահանգներով: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ	Որպես հիմնական ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,1%, որպես սիներգետիկ բաղադրիչ՝ իզոպրապանոլ (պրոպանոլ - 2)՝ 40%, ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում ջրի կոնդիցիոներ, էմուլգատոր, փափկացնող հավելումներ, Ե վիտամին, մածուցիկության կարգավորիչ և դեիոնիզացված խմելու ջուր: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ առ 06 հուլիսի 2018, 1707-Ա:	նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝ օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չի պարունակում հոտավետ բաղադրիչներ: հականեխիչ գելը նախատեսված է վիրաբույժների, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության մեթոդական հրահանգներով: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ	իզոպրոպանոլ (պրոպանոլ - 2)՝ 40%, բաղադրությամբ նյութ:
41	Ստերանիոս Բարձր մակարդակի ախտահանող (ԲՄԱ) և մանրէազերծող նյութ - Գլուտարալդեհիդ 20%: Խտանյութ	Ստերանիոս: Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ Բաղադրամասեր: Ունենա որակի հացաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ	<<Ստերոքս», գլուտարալդեհիդ 2,7 %-5լ, Ունի ԵՏՄ սերտիֆիկատ ն ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ առ 06 հուլիսի 2016թ., թիվ 2100-Ա:	Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:	Գլուտարալդեհիդի 20% խտանյութի փոխարեն ւսռաջարկվե է 2.7% պատրաստի աշխատանքային լուծույթ:

Վերը նշված համեմատական աղյուսակի ուսումնասիրությունից ակնհայտ երևում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը ակնհայտ տարբերվում են և չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին, այն է 36-րդ չափաբաժին Չորս և ավելի ֆերմենտ պարունակող բազմակոմպոնենտ խտանյութի փոխարեն առաջարկվել է միայն 1 ֆերմենտ՝ պրոտեոլիտիկ պրոտեազա պարունակող նյութ, 37-րդ չափաբաժին դենատուրացված էթանոլ 60%-75%-ի փոխարեն առաջարկվել է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 0,1%, որպես սիներգետիկ բաղադրիչ իզոպրոպանոլ (պրոպանոլ - 2) 40%, բաղադրությամբ նյութ և 41-րդ չափաբաժին Գլուտարալդեհիդի 20% խտանյութի փոխարեն առաջարկվել է 2.7% պատրաստի աշխատանքային լուծույթ, այսինքն <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ապրանքները ուղղակի չեն կարող համարժեր լինել Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով տեխնիկական բնութագրով 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար նախատեսված ապրանքներին:

Վերոնշյալով պայմանավորված գտնում ենք, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը գնահատելիս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգով և հնարավորություն տար <<Խաչպար>> ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունները, իսկ դրանք չշտկելու դեպքում համապատասխանաբար մերժեր վերջինիս հայտը, քանի որ <<Խաչպար>> ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար ներկայացրել է այլ տեխնիկական բնութագրերով (անհամապատասխան) սահմանված ապրանքներ (ոչ համարժեք):»:

Ելնելով վերոգրյալից, «Արմենֆարմ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «Վանաձորի բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

- Դադարեցնել հանձնաժողովի՝ 24.12.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- Դադարեցնել հանձնաժողովի 26.12.2019թ. թիվ 4 որոշմամբ Ընթացակարգի 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

- Դադարեցնել 2019թ. դեկտեմբերի 26-ին կայացված և www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 36, 37 և 41-րդ չափաբաժինների:

3. <u>«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 10.01.2020թ.-ի գրությամբ դիմել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին, ներկայացնելով գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

«Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ- ն 2020 թ-ի դեկտեմբերի 19-ին հայտարարել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով Քիմիական նյութերի ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգ: Հրավերի թիվ 36, 37 և 41 չափաբաժինների տեխնիկական բնութագրերով ներկայացվել է ընկերությանը անհրաժեշտ նյութի բնութագիր:

Քանի որ ՀՀ գնումների մասին օրենքի 13 հոդվածի 5-րդ կետով <Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց>, մրցույթի հրավերում հղում է օգտագործվել «կամ համարժեք» բառը: Մրցույթի այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմայի անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է եղել «կամ համարժեք» արտահայտությունը, ՀՀ գնումների մասին օրենքի սահմանված պահանջներին համապատասխան:

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ն ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով քիմիական նյութերի գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերման մրցույթի դեկտեմբերի 24-ի գնահատման հանձնաժողովի թիվ 3 որոշմամաբ 36, 37 և 41 չափաբաժիններով հաղթող է ճանաչել Խաչպար ՍՊԸ-ին: Հանձնաժողովը չի համարում, որ Խաչպար ՍՊԸ-ի կողմից

առաջարկած նյութերը համարժեք են պահանջած նյութերին, բայց քանի որ նշված նյութերի համարժեքության ապացուցումը դժվարություններ առաջացրեց հանձնաժողովի կազմում, որոշվեց հաղթող ճանաչել ցածր գին առաջարկած կազմակերպությանը:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Խաչպար» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ներկայանալով հրավիրված նիստերին և ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Վանաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից 11.12.2019թ. հայտարարված <<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով մրցույթի (կից փաստաթուղթ թիվ 1) Հրավերի թիվ 36, 37 և41 և 50-րդ չափաբաժինների մասերով Պատվիրատուն պահանջել է տարբեր նպատակներով կիրառվող ախտահանիչ միջոցներ, որոնց <<անվանումը>> սյունակներում (կից փաստաթուղթ թիվ 2, արված նշումները) և <<տեխնիկական բնութագիրը>> սյունակներում պարունակվում են հղումներ կոնկրետ առևտրային նշանների, ֆիրմային անվանումների, ինչպես նաև այդ արտադրանքների կոնկրետ տվյալներին (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 1-3, արված նշումները), սակայն Պատվիրատուի կողմից պահպանվել է ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը և Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>> Հավելված թիվ 1-ի <<Ծանոթություն>> բաժնում առկա է համապատասխան՝ <<Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմայի անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է <<կամ համարժեք>> արտահայտությունը, ՀՀ գնումների մասին օրենքի սահմանված պահանջներին համապատասխան:>> նշումը (կից փաստաթուղթ թիվ 3, էջ 4, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն <<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով մրցույթին գնային առաջարկ է ներկայացրել Հրավերի թիվ 36, 37, 38, 39, 41, 42 և 50-րդ չափաբաժինների,

որտեղ թիվ 36, 37, 38, 39, 41և 50-րդ չափաբաժինների մասերով առաջարկել է համարժեք ապրանքներ (կից փաստաթուղթ թիվ 4), ինչպես նաև ներկայացրել է Հավելված թիվ 1.1-ը, որտեղ ներկայացված են այդ ախտահանիչ միջոցների բնութագրերը, ինչպես նաև ՀՀ ԱՆ կողմից հաստատված մեթոդական հրահանգների հրամանների մասին տվյալները (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1-2, արված նշումները):

<<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը համեմատելով <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 36, 37, 38, 39, 41և 50-րդ չափաբաժինների մասերով առաջարկված ախտահանիչ միջոցների բնութագրերը, ՀՀ ԱՆ կողմից հաստատված մեթոդական հրահանգներում առկա տվյալները, ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ դրանք համարել է օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքներին, որոնց բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, և առաջնորդվելով Հրավերի Հայտարարության սահմանումով՝ << Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:>> (կից փաստաթուղթ թիվ 1, արված նշումները), Հրավերի թիվ 36, 37, 38, 39 և 41-րդ չափաբաժինների մասերով՝ որպես նվազագույն գին առաջարկած մասնակից, որոշել է 1-ին տեղ զբաղեցնող, ապա նաև հաղթող մասնակից ճանաչել <<Խաչպար>> ՍՊԸ-ին, որի առաջարկած գները այդ չափաբաժինների մասերով 2-րդ տեղը զբաղեցրած <<Արմենֆարմ>> ՍՊԸ-ի գներից՝ ընդհանուր թվով, նվազ էին 320100 /երեք հարյուր քսան հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամի չափով (կից փաստաթուղթ թիվ 6, էջեր՝ 1-4, արված նշումները):

<<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի այդ որոշումները համապատասխանում են ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

<<Արմենֆարմ>> ՍՊԸ-ն բողոքարկել է գնահատող հանձնաժողովի որոշումները՝ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասերով, որպես համարժեք առաջարկված ապրանքները համարժեք ճանաչելու, 1-ին տեղ զբաղեցնող, ապա նաև հաղթող ճանաչված մասնակից հայտարարելու համար, դրանք համարելով որպես ակնհայտ կերպով տարբերվող և հրավերի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող:

<<Արմենֆարմ>> ՍՊԸ-ի բողոքը համարում ենք անհիմն և մերժման ենթակա հետևյալ հիմնավորումներով՝

1) <<ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի այդ որոշումները համապատասխանում են ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, ինչպես նաև Հրավերով սահմանված սկզբունքին:

2) <<Արմենֆարմ>> ՍՊԸ-ի բողոքը նաև անտրամաբանական, անհետևողական և անսկզբունքային է, քանի որ նրա կողմից չեն բողոքարկվել գնահատող հանձնաժողովի որոշումները՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 38 և 39-րդ չափաբաժինների մասերով որպես համարժեք առաջարկված ապրանքները համարժեք ճանաչելու, 1-ին տեղ զբաղեցնող, ապա նաև հաղթող ճանաչված մասնակից հայտարարելու համար, ինչը նշանակում է, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 38 և 39-րդ չափաբաժինների մասերով առաջարկված ապրանքները <<Արմենֆարմ>> ՍՊԸ-ն համարում է համարժեք այն ապրանքներին, որոնք պահանջվում են Հրավերով, և որ դրանց տվյալները համապատասխանում են հրավերի տեխնիկական բնութագրերում առկա տվյալներին:

Համաձայն ՀՀ ԱՆ կողմից հաստատված <<Բոնսոլար>> և <<Դիասեպտիկ>> անվանումներով ախտահանիչ միջոցների մեթոդական հրահանգների, այդ ապրանքները իսկապես կիրառվում են այն նույն նպատակների և կարիքների համար, ինչն անհրաժեշտ է եղել Պատվիրատուին՝ համաձայն իր պահանջների, նույնն են նաև դրանց ազդող նյութերը (կից փաստաթուղթ թիվ 7, էջեր՝ 1-2, արված նշումները), սակայն առաջարկվող ապրանքների ազդող նյութերը իրենց տոկոսային պարունակություններով տարբերվում են տեխնիկական բնութագրերում ներառված տվյալներից՝ այնպես ինչպես <<Արմենֆարմ>> ՍՊԸ-ի կողմից բողոքարկվող թիվ 36, 37 և 41-րդ չափաբաժինների մասերով չափով ապրանքների մոտ է (կից փաստաթուղթ թիվ 3, էջ 2, արված նշումները):»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2020/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 11.12.2019թ.-ին հայտարարվել է «ՎԲԿ-

ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար սահմանվել է հետևյալ պայմանները.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը և ապրանքային նշանը**	**տեխնիկական բնութագիրը**
36	33621643	Անիոզիմ սիներժի Ֆերմենտատիվ լվացող նյութ՝ նախատեսված բժշկական իրերի լվացման համար	Չորս և ավելի ֆերմենտ պարունակող բազմակոմպոնենտ խտանյութ: Խտանյութից ստացված աշխատանքային լուծույթներր չեն առաջացնում մետաղների ժանգոտում, չեն վնասում ջերմազգայուն նյութերր, լավ լվացվում են: Կիրառվում է տարբեր նյութերից բժշկական արտադրատեսակների, ներառյալ վիրաբուժական (այդ թվում խողովակ ունեցող), միկրովիրաբուժական և ատամնաբուժական (այդ թվում պտտվող) գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար, կոշտ և ճկուն էնդոսկոպների ձեռքային եղանակով նախնական և նախամանրէազերծումային մաքրման համար (եզրափակիչ՝ բարձր մակարդակի ախտահանումից առաջ, էնդոսկոպներին կից գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար: Լվացող միջոցը պետք է երաշխավորված լինի կամ Storz, կամ Olympus, կամ Fujinon, կամ Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: Լվացող միջոցի գործարանային փաթեթավորումը 5լ տարայով: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն : Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

37	33621643	Անիոսգել Հականեխիչ գել ձեռքերի հիգիենիկ եւ վիրաբուժական մշակման համար	Անիոսգել : Բաղադրությունը - դենատուրացված էթանոլ 60%-75%, իզոպրոպանոլի առկայության դեպքում՝ քանակը չգերազանցի 5%-ը, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ բաղադրիչներ: Հականեխիչ գելը պետք է նախատեսված լինի վիրաբույժների, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության մեթոդական հրահանգներով: Ախտահանիչ նյութը պետք է ունենա մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ՝ ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվի առնվազն 3 ժամվա ընթացքում: Փաթեթավորումը - 1 լ ծավալի պոլիէթիլենային տարա դիսպենսերով: Մատակարվող ապրանքի պահպանման ժամկետը ոչ պակաս քան 3 տարի:
41	24451140	Ստերանիոս Բարձր մակարդակի ախտահանող (ԲՄԱ) և մանրէազերծող նյութ - Գլուտարալդեհիդ 20%: Խտանյութ	Ստերանիոս : Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ,կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը- 0.5 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: 0,5լիտր խտանյութից պատրաստվում է 2% 5լիտր աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը ոչ պակաս, քան 30 օր է: Խտանյութից աշխատանքային լուծույթ կարելի է պատրաստել ըստ անհրաժեշտ ծավալի: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Ունենա թեստ զոյեր լուծույթի պիտանելիությունը վերահսկելու համար: Ախտահանիչ նյութի pH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման,բարձր մակարդակի ախտահանման,մանրէազերծման և սպորազերծման համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը մինչև 10րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը մինչև 60րոպե: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: 1լ=1 կգ

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների համար հայտ են ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.12.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ:

08.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ Հանձնաժողովի 26.12.2019թ. թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան, ինչով պայմանավորված ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիր դաշտում Ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով նշվել է հետևյալը՝

36		Տուրբիլոն Ե խտանյութ	Տուրբիլոն Ե խտանյութ	Ինտերսեն Պլյուս	«Տուրբիլոն Ե» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է բարձր խտությամբ, ջրում լուծելի, համասեռ դեղին հեղուկ՝ յուրահատուկ հոտով և ցածր փրփուրառաջացմամբ : Որպես ազդող նյութ՝ միջոցը պարունակում է պրոտեազա պրոտեոլիտիկ ֆերմենտ, լրացուցիչ՝ անիոնային մակերեսային ակտիվ նյութեր, ֆունկցիոնալ հավելումներ, կոնսերվան Միջոցը նախատեսված է բժշկական կազմակերպություններում օգտագործման համար Տարբեր նյութերից բժշկական արտադրատեսակների (բացառությամբ բնական կաուչուկի հիմքի վրա ստացված ռետինի), ներառյալ վիրաբուժական (այդ թվում խողովակ ունեցող), միկրովիրաբուժական և ատամնաբուժական (այդ թվում պտտվող) գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար, կոշտ և ճկուն էնդոսկոպների ձեռքային եղանակով նախնական և նախամանրէազերծումային մաքրման համար (եզրափակիչ՝ բարձր մակարդակի ախտահանումից առաջ: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 06 հոդիսի 2018թ., թիվ 1706-Ա:
37		Դիասեպ տիկ 40 գել, 1լ	Դիասեպ տիկ 40 գել, 1լ	Ինտերսեն Պլյուս	<<Դիասեպտիկ 40 գել>>, 1լ, իրենից ներկայացնում է բազմաբաղադրիչ սպիրտ պարունակող ախտահանիչ միջոց՝ մաշկային հականեխիչ՝ մածուցիկ անգույն թափանցիկ կիրառման համար պատրաստ հեղուկի տեսքով: Որպես հիմնական ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,1%, որպես սիներգետիկ բաղադրիչ՝ իզոպրոպանոլ (պրոպանոլ - 2)՝ 40%, ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ ջրի կոնդիցիոներ, էմուլգատոր, փափկացնող հավելումներ, Ե վիտամին, մածուցիկության կարգավորիչ և դեիոնիզացված խմելու ջուր: Միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների և ներհիվանդանոցային վարակների, ախտածին սնկերի՝ դերմատոֆիտների և կանդիդոզների հարուցիչների, վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի, պարագրիպի և սուր շնչական վարակների այլ հարուցիչներ, էնտերովիրուսներ, պոլիոմիելիտի վիրուս, ընդերային և արտաընդերային հեպատիտների, հերպեսի, մարդու իմունային անբավարարության վիրուսի, ատիպիկ թոքաբորբի, թռչնի գրիպի և այլ վիրուսների): Միջոցն օժտված է երկարատև ազդեցությամբ՝ 3 ժամից ոչ պակաս: Նյութի պիտանելիության ժամկետը 3 տարի: Տարան դոզավորող պոմպով՝ 1 սեղմումը 2,5-3մլ, մեկ հիգենիկ մշակումը- 2,5-3մլ-30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը -5-6մ| -90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 18 մայիսի 2016թ., թիվ 1509-Ա:

41		Ստերոքս 2,7 %-	Ստերոքս 2,7 %-	Ինտերսեն Պլյուս	<<Ստերոքս>>, գլուտարալդեհիդ 2,7 % -5լ, պիտանելիության ժամկետը՝ 3 տարի, աշխատանքային լուծույթը բազմակի օգտագործման համար է, պիտանելիության ժամկետը 90 օր: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման-, բարձր մակարդակի ախտահանման , մանրէազերծման և սպորազերծման համար: pH 6 ± 2; Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունի ԵՏՄ սերտիֆիկատ և ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 06 հողիսի 2016թ., թիվ 2100-Ա:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը: Հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթերի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր մասնակցի հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա

մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 11.12.2019թ.-ին հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների 36, 37 և 41-րդ չափաբաժինների համար հայտ են ներկայացրել «Արմենֆարմ» ՍՊԸ-ն և «Խաչպար» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ «Արմենֆարմ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ:

08.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման համաձայն՝ Հանձնաժողովի 26.12.2019թ. թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան, ինչով պայմանավորված ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում

իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկած նյութերի ոչ համարժեք լինելու փաստի վերաբերյալ վերաբերելի ապացույց: Այն, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկած նյութերը համարժեք չեն Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին ու Պատվիրատուի այն կարիքին, որի համար հայտարարվել էր ընթացակարգը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Անդրադառնալով Բողոքաբերի կողմից կատարված համեմատական աղյուսակին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ աղյուսակում առկա տրամաբանական համեմատականները զուրկ են ոլորտի վերաբերյալ որևէ մասնագիտական ապացույցներից, այն է՝ առկա չէ ոլորտը կարգավորող կամ սպասարկող որևիցե մասնագիտական մարմնի տրված եզրակացություն կամ կարծիք: Ավելին՝ Պատվիրատուն, հանդիսանալով մասնագիտական մարմին, իր իսկ գրությամբ է նշել, որ

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկած նյութերի համարժեքության ապացուցումը դժվարություններ են առաջացրել:

Այն դեպքում, երբ Հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տվյալների իսկության նկատմամբ հիմնավոր կասկած ունենալու դեպքում կարող էր ստուգել դրանք՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ՝ ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի դրույթներով սահմանված պահանջներով, որը սույն դեպքում տեղի չի ունեցել:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ին ընթացակարգի 36-րդ, 37-րդ և 41-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, վերջինիս հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումներն իրավաչափ են, որպիսի պայմաններում «Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ենթակա է երժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արմենֆարմ» ՍՊԸ-ի կողմից 10.01.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/17 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**